ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1947, № 4 *Общественные науки*

Լ. Խաչիկյան

ԴԻԱՀԵՐՁՈՒՄԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Միջնադարից մեզ հասած հարուստ ձեռագրական ժառանգության մեջ երկրի տնտեսական ու սոցիալական կյանքի ուսումնասիրության համար կարևորագույն նշանակություն ունեցող սկզբնաղբյուրներ են հանդիսանում եկեղեցիներում կարդացված քարոզները։

Իրենց բովանդակությամբ քարոզները բաժանվում են մի շարք խըմբավորումների։ Մեծ մասամբ նրանք մեկնողական բնույթի են և նպատակ ունեն Աստվածաշնչի որևէ ասույթի մանրակրկիտ քննարկմամբ բարոյագիտական խրատներ տալ ժողովրդին, արմատացնել քրիստոնեական մորալն ու եկեղեցու դոգմաները։

Սակայն թվով քիչ չեն նաև պատմական որևէ դեպքի կամ գիտական հարցի առիթով կարդացված քարոզները, որոնցից, առավել չափով քան նախորդներից, կարելի է քաղել սոցիալ-տնտեսական հարաբերությունների, կենցաղի, ժողովրդի հավատալիքների, ինչպես և գիտության ու արվեստի վերաբերյալ հետաքրքրական այնպիսի փաստեր ու ակնարկներ, որ այլ ժանրի ձեռագիր աշխատությունների մեջ սակավ են հանդիպում։ Սույն հոդվածով մենք բժշկագիտության պատմաբանների ուշադրությունն ենք հրավիրում 13-րդ դարի նշանավոր մատենագիր Հովհաննես Երզնկացու մի քանի քարոզների վրա, որոնցում պահպանվել են կարևոր տեղեկություններ միջնադարյան հայ բժշկության մասին։

Հովհ. Երզնկացին ծնվել է մոտավորապես 1256 թվին։

Հովհաննեսի գրական, գիտական, մանկավարժական ու քաղաքական գործունեության մասին անգամ համառոտ տեղեկություններ հաղորդելու կարիքը, մեզ հետաքրքրող նյութի կապակցությամբ, չի զգացվում։ Նշենք միայն, որ նա հեղինակ է արվեստով գրված բազմաթիվ բանաստեղծությունների, կազմել է Դիոնիսիոս Թրակացու Քերականության հայ հին մեկնիչների աշխատությունների շարահարմամբ քերականի հավաքածո մեկնություն, գրել է տիեզերագիտական երկեր, բարոյագիտական խրատներ, մեկնություններ և այլն և այլն։

1281 թվին Երզնկացին լինում է Երուսաղեմում։[1] Վերադարձին մտնում է Կիլիկիա և սիրով հյուրընկալվում գիտությունների հովանավոր Հակոբ կաթողիկոսի (1268—1286 թ. թ.), ինչպես և Լևոն Բ. թագավորի կողմից։

Որպես բոլորից ճանաչված մեծանուն ու հեղինակավոր վարդապետ, գիտական և եկեղեցական գործերից զատ, բազմաթիվ քարոզներ է կար-

[1] *Երուսաղեմում Հ., հավանաբար, գրել էր «Յորդորակ եկեղեցւոյ» գողտրիկ ճառը, Ստեփաննոս վարդապետ Կոռիկոսցու խնդրանոք։*

գում արքայանիստ Սսում, Դրազարկում, Անավարզայում և Կիլիկիայի այլ քաղաքներում։[1] Այդ քարոզներից հատկապես հետաքրքիր է իր բովանդակությամբ 1283 թվին, Հեթում և Թորոս արքայորդիների, ինչպես և այլ իշխանազունների ասպետական կարգը մտնելու առթիվ կազմակերպված հանդիսում արտասանածը, որով Երզնկացին քարոզում է մարդասիրություն, արդարություն, խնամք հպատակների նկատմամբ և այլն։

Հավանորեն նույն 1283 թվին էլ Երզնկացին թողնում է հյուրընկալ Կիլիկիայի ոահմանները, որովհետև արդեն 1284 թվին նրան գտնում ենք Թիֆլիսի եկեղեցիներից մեկում տիեզերագիտական բովանդակությամբ դասախոսություն կարդալիս։ Այսպիսով, Երզնկացին Կիլիկիայում եղել է 1281—1284 թվերի միջև ընկած ժամանակամիջոցում, ուստի Կիլիկիայում կարդացած քարոզների համար ունենք վստահելի ժամանակագրական եզրեր (1281—1284 թ. թ.)։[2]

Քարոզները ունկնդիրներին դյուրամատչելի դարձնելու, ինչպես և մեծ թվով հանդիսականներ դրավելու համար, քարոզիչ վարդապետները դիմում էին մի շարք հնարների։

Տաղանդավոր քարոզիչ Վարդան Այգեկցին իր քարոզները համեմում էր հետաքրքրական առակներով, որոնք հետագայում, անջատվելով քարոզներից, Վարդանի անունով մեզ հասած առակների ժողովածուների համար առաջի դեր կատարեցին։

Այլ քարոզիչներ մուծում էին քարոզների մեջ անդամ առանձին բանաստեղծություններ, ինչպես և գեղարվեստական խոսքին ընորոշ մի շարք հատկություններով (պատկեր, համեմատություն, մետաֆորա, էպիտետ և այլն) ավելի հետաքրքրական էին դարձնում քարոզները։

Հովհաննես Երզնկացու քարոզների ամենաբնորոշ կողմը՝ կյանքից վերցված ու բոլոր ունկնդիրներին հասկանալի համեմատություններով վերացական նյութը պարզեցնելն ու հասկանալի դարձնելն է։

Բերենք մի օրինակ. «Ի Թագաւորանիստ քաղաքն ի Սիս», Քրիստոսի ծննդյան ու մկրտության տոնին կարդացած քարոզում, հանդիսականներին հասկացնելու համար, թե ինչպիսի խորհրդավոր ու հրաշագան տոն է ծննդյան ու մկրտության տոնը, և թե ինչպիսի մեծ ոգևորությամբ ու շքեղությամբ պետք է հավատացյալները կատարեն այդ տոնի հանդեսները, Երզնկացին դիմում է հետևյալ համեմատությանը՝

«Ցորժամ նոր արքայ աշխարհակալ յաթոռ թագաւորութեան նստիցի և դիրս թագաւորական հրամանի յաշխարհն առաքիցէ, ի բազմամբոխ ժողովս քաղաքացն և ի յողնակի շինուածս փողոցացն, աւետեաց ինն հնչիւն և բերկրական զիմաց տեսութիւն ե խրախճանութիւնս ամենապատիկս ընդ բոլոր հրապարակս քաղաքին առնիցեն, զփողոցն դարդարելով ի բազմածաղիկ նկարագործական կտաւոցն ծածկութից, ծաոս և ծաղիկս ոստոց և համադամ պտղոցն զեղեցկու-

[1] Տես՝ Ձեռ. № 2173, էջ 1ա, 66ա, 86ա, 101ա և այլն։

[2] Հ. Ղ. Ալիշանն իր «Երզնկա և Ցովհաննէս Երզնկացի» հոդվածում (տես Ցուցակ Հայրենեաց Հայոց, հատոր Բ. Վենետիկ, 1870), հայտնում է, որ Երզնկացին այցելել է Կիլիկիա նաև 1293 ու 1316 թվերին։ Սակայն Երզնկացու կենսագրությանն ու գրական գործունեությանը լավատեղյակ ընկ. Ա. Սրապյանի կարծիքով, վերոհիշյալ ենթադրությունը չի հաստատվում եղած ձեռագիր ու տպագիր փաստերի ժամանակագրական քննությամբ։

Թեամբ վայելչացուցանեն գիւրաքանչիւր գդրունս և գխանութս։ Եւ զանազան գործօնեայքն արհեստիցն գիւրեանցն զարդարել փութան փողոցս, և այսպէս հրապարակատես զուրախութիւն սրտիցն առնիցեն» և այլն։[1]

Հետևությունը պարզ է, եթե երկրավոր թագավորի պատվին կատարվում են նման խրախճանքներ, «ապա քանի՞ ևս առաւել պարտ է մեզ զուարճանալ տէրունական տօնիւք»։

Այսպիսի համեմատություններից մի քանիսը վերաբերում են բժշկագիտությանը, և հայ բժշկության պատմության մի շարք հարցերի մասին լուրջ խորհրդածությունների հնարավորություն են ընձեռում։

Մեզ հետաքրքրող առաջին համեմատությունը գտնվում է ՃԷ (107) Սաղմոսի մեկնությանը նվիրված քարոզում։[2]

Երզնկացին քննարկում է այն հարցը, թե ինչու աստված խստացրեց եգիպտական փարավոնի սիրտը, որի հետևանքով եգիպտացիք կրեցին բազմաթիվ պատիժներ ու արհավիրքներ։ Պատասխանը սրամիտ չէ, «որպէսզի,—գրում է նա,—ուսցին ամենայն արարածք զզաւրութիւն և զիրաւունս աստուծոյ»։

Այս բացատրությունը համոզիչ դարձնելու ցանկությամբ՝ Երզնկացին դիմում է իր սիրած համեմատություն կատարելու, օրինակ բերելու մեթոդին։ Օրինակն անշուշտ պետք է լիներ այնպիսին, որ ցրեր ունկնդիրների մոտ առաջացած հնարավոր տարակուսանքը։ Հանրահայտ ու սովորական կյանքից վերցված համեմատությունը միայն կարող էր կատարել այդ դերը։ Եվ այստեղ Երզնկացին հարմար է գտնում հիշեցնելու հանդիսականներին հերձման փաստը։ Բժիշկը մահապարտին հերձելով, չնայած բազմապիսի ցավերի ու տանջանքների միջոցով սպանում է նրան, բայց ծանոթանալով մարդու ներքին օրգաններին, սովորում է հիվանդներին բուժելու արվեստը և շատ շատերին փրկում մահվան ճիրաններից։

Մեզ հետաքրքրող հատվածը, առանց որևէ փոփոխության, հետևյալն է.

«Զորօրինակ բժիշկ հանճարեղ և իմաստուն զմահապարտ ոք առեալ բազմադիմի մահուամբ սպանանէ և ազգի ազգի կտտանօք և կեղեքելով, մինչ գտանէ զամենայն յօդուածոցն և զԹլացն և զերակացն և զփորոտեացն զորպիսութիւն, ի ձեռն միոյ լլկանաց բազմաց արասցէ աւգուտ» (էջ 214 բ)։

Բերված հատվածը տարակուսանքի ու կասկածների որևէ տեղիք չի տալիս. պարզ է, որ Երզնկացու ունկնդիրների միջավայրում (իսկ մենք

---

[1] Ձեռ. № 2173, էջ 66ա-բ. բերված հատվածի «և զանազան գործօնեայքն արուեստիցն գիւրեանցն զարդարել փութան փողոցս» մասերում ակնարկված են արհեստավորական համքարությունները, որովհետև միջնադարում յուրաքանչյուր համքարություն ուներ իր փողոցը։ Այս տեղեկությունը նույնպես ցույց է տալիս, թե քարոզներն ինչքան բան կարող են տալ երկրի տնտեսական կյանքի չպարզաբանված հարցերի լուծման համար։

[2] Հմմտ. Երզնկացու այս և մյուս քարոզների համար օգտագործել ենք Հայկ. ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Գլխ. Ձեռագրատան № 2173 (2187) ձեռագիրը. որը Հմմտ. Երզնկացու աշխատությունների մի ժողովածու է, գրված 14-րդ դարում, ստացողն է Ստեփանոս Րաբունին, բաղկացած է 424 թղթյա թերթերից։ Սույն քարոզը «Նորին (Յովհ. Երզնկ.) ի ՃԷ. Սաղմոսն (ի բանն)՝ Խոստովան եղերուք տեառն, զի քաղցր է» վերնագրով գտնվում է ձեռագրի 210 ա—224 ա էջերում։

տեսանք, որ այդ քարոզները նա կարդացել է Կիլիկիայում, 1281—1284 թվերի միջև) բժիշկները ոչ միայն կատարում էին հերձում, այլև հերձումն այնքան հանրահայտ օպերացիա էր, որ նրա որպես համեմատություն հիշատակությամբ հնարավոր էր անդամ ընդունելի ու հավոգիչ դարձնել աստվածաշնչային այս կամ այն պատմությունը։

Հասկանալու համար Հովհաննես Երզնկացու հաղորդած տեղեկության նշանակությունը բժշկագիտության պատմության համար, համառոտ մի ակնարկով վերհիշենք դիահերձման պատմությունը։

Որքան մեզ հայտնի է, առաջին հիշատակությունները դիահերձման մասին վերաբերում են վերջին դարերին մ. թ. ա.։ Հայտնի է, որ Եգիպտոսում, Պտղոմեոս թագավորի կարգադրությամբ, մահապարտների դիակները հանձնվում էին բժիշկներին՝ դիտական հետազոտություններ կատարելու նպատակով։

Հետագա դարերում, կրոնական նախապաշարումների արմատավորման շնորհիվ, դիահերձումները դադարեցին։ Եղակի բժիշկներ միայն երբեմն կատարում էին կենդանիների հերձումներ։

Միջին դարերում դիահերձումը համարվում էր պղծություն ու դիվային մի բան, և դրա մեջ կասկածվողները ենթարկվում էին ամենածանր հալածանքների։

Անդամ Սալերնոյի հանրահռչակ բժշկագիտական դպրոցում, ըստ լավատեղյակ մասնագետների, հերձվում էին միայն կենդանիների դիակներ։ Ճիշտ է, Սիցիլիայի բժշկապետ Մարցիանը հաղորդում է, որ Ֆրիդրիխ Բ-ի հրամանով (1238 թ.) թույլատրվում էր 5 տարին մի անդամ բժիշկների ու վիրաբույժների ներկայությամբ Սալերնոյի դպրոցում կատարել դիահերձում, սակայն այդ տեղեկությունը դեռևս ստուգման ու հաստատման կարիք է զգում։[1]

Միայն 16-րդ դարում, Պիոս Դ. պապի կոնդակով, եկեղեցու կողմից թույլատրվել է ու առաջարկվել դիահերձումը, որպես հիվանդությունների բուժումն ավելի դիտական հիմքերի վրա դնելու կարևոր միջոց, դրանից հետո հերձումը բժիշկների պրակտիկայում դարձավ սովորական և անհրաժեշտ օպերացիա։ Այս բնագավառում հատկապես հռչակվեց Վեզալիոսը (1514—1564 թ. թ.), որը դիահերձման մեծ փորձ ձեռք բերելով, իր „De corporis homani fabrica" աշխատության մեջ կարողացավ ուղղել հույն մեծանուն բժիշկ Գալենի սխալները (Գալենը կատարել էր միայն կապիկների հերձումներ)։

Նշենք նաև, որ բժշկագիտության պատմությունը կտրականապես պնդում է, որ արաբական բժշկագիտության մեջ դիահերձումների անդամ եզակի դեպքեր չեն եղել և այդ մասին մտածելն անդամ համարվել է սրբապղծություն և անարդանքի արժանի հանդգնություն։[2]

Այսպիսով, Հովհ. Երզնկացու տեղեկությունը մեծ արժեք է ստանում ոչ միայն հայ, այլև համաշխարհային բժշկագիտության պատմության համար։

---

[1] *Մեյեր-Շտեյնեգ, Կ. Զուդհոֆ.* История медицины, Москва, 1925, стр. 196—198.

[2] Проф. *Л. А. Оганесян*, История медицины в Армении, т. I, Ереван, 1946, стр. 209.

Շարունակենք մեզ հետաքրքրող հատվածի քննությունը։

Ինչպես տեսանք, բժիշկները հերձում կատարում էին մահապարտների վրա և, ըստ երևույթին, ոչ թե դիակների, այլ կենդանի մահապարտների («Բժիշկ հանճարեղ և իմաստուն զմահապարտ ոք առեալ քաղմադիմի մահուամբ սպանանէ», *ասված է քարոզում)։*

Իսկ նրանք իրավունք կունենային կենդանի մահապարտի մարմինը հերձել միայն այն դեպքում, երբ հանդես գային ոչ որպես անհատ գիտնականներ, այլ պետական հովանավորությունը վայելող մարդիկ, որոնց գործունեությունը պետության կողմից դիտվեր որպես հանրօգուտ, հասարակության շահերից բխող գործունեություն։ Հակառակ դեպքում անհնարին է բացատրել, թե ինչ իրավունքով և միջոցներով պետք է որևէ բժիշկ տեր դառնար դատական մարմինների կողմից մահվան դատապարտված հանցագործի մարմնին։

Մի շարք անուղղակի վկայություններ գալիս են հաստատելու մեր այս ենթադրությունը։ Թվենք դրանցից մի քանիսը.

Ալիշանը հայտնում է, որ Լևոն Ա-ի արքունիքում հյուրընկալված մի ֆրանկ (եվրոպացի) տեսել է այնտեղ վաթսունից ավելի ներքինի սպասավորներ, որոնցից շատերը ներքինացվել էին ի պատիժ գործած հանցանքի։[1]

Մի այլ եվրոպացի (Burchardus de Monte Sion) *1284 թվին այցելելով Կիլիկիա և թողնելով իր շատ հետաքրքրական հուշերը, ուշադրություն է դարձնում Թագուհու ապարանքում եղող 40 ներքինի սպասավորների վրա և հաղորդում է, որ «այն ոճրագործները, որոնք թեթև ոճիր ունեն կատարած, ամորձատվում են, որպեսզի հայրերի ոճրագործությունները ընդօրինակող զավակներ չծնեն»։*[2]

Ներքինացումը բարդ և վիրաբուժական հմտություն պահանջող օպերացիա է։ Ուստի սույն փաստերն էլ գալիս են հիմնավորելու Կիլիկիայում պետական ու դատական մարմինների և բժիշկների միջև սերտ համագործակցություն լինելու մասին արված վերոհիշյալ ենթադրությունը։

Հանցագործների հանդեպ, նայած հանցանքի չափին (պետության կողմից ներքինացման կամ մահվան դատապարտվելու դեպքում), բժիշկները ստանձնում էին դատարանի որոշումն իրագործողների դեր՝ մահվան դատապարտվածին դիահերձելով (գիտական նպատակներով), ներքինացման դատապարտվածին ներքինացնելով (և՛ գիտական, և՛ արքունիքին անհրաժեշտ սպասավորներ մատակարարելու նպատակներով)։

Վերոհիշյալից դժվար չէ եզրակացնել, որ Կիլիկիայում բժշկությունն ու առողջապահությունը դիտվել է որպես պետական գործ և ֆինանսավորվել է պետության կողմից։

1833 թվին Սսում պատահական պեղման հետևանքով դուրս եկած մի արձանագրություն ուղղակի կերպով հաստատում է այս։

Արձանագրությունը վերաբերել է Զապել թագուհու կառուցած հիվանդանոցին և հետևյալն է. «Յաջմարումն շինուածոյ հիւանդանոցիս, Բրիս-

[1] Ղ. Ալիշան, *Սիսուան, Վենետիկ, 1885 թ.։*

[2] «Descriptio Terrae Sanctae» (Peregrinatores Medii aevi quatuor ed. F. C. M., Laurent, Lipsiae, 1864).

տօսասէր թագուհւոյ Զապէլի, ի թվին հայոց ՈՂ։ Հասկանալի է, որ Լևոն Բ-ի դուստր՝ Թագուհի Զաբելը 1241 թվին, արքայանիստ Սսում կառուցելով հիվանդանոց, պետք է հոգար նաև հիվանդանոցի ծախքերը, մտածեր նոր բժշկական կադրեր աճեցնելու մասին և այլն և այլն։

Արժանի է հիշատակության, որ Կիլիկիայում ընդհանրապես սեր է տածվել դեպի գրականությունն ու գիտությունը, հովանավորվել ու զարկ է արվել կուլտուրական հաստատություններին։

Բժշկությունն այս առումով բացառություն չի կազմել և եղել է ուշադրության կենտրոնում։ Բժիշկները մերձավոր կապեր են ունեցել ժամանակի ամենանշանավոր քաղաքական ու եկեղեցական գործիչների հետ։ Որպես օրինակ նշենք, որ Ներսես Շնորհալին «ի խնդրոյ» Մխիթար Հերացի բժշկապետի գրել է բանաստեղծություններ, Ներսես Լամբրոնացին մոտ է եղել մի այլ բժշկի՝ Արուսայիդին, և նրա պատվերով գրել է «Անուանք քաղաքաց շինողաց» աշխատությունը և այլն և այլն։

Նշանակալից է նաև, որ որոշ իշխաններ ցանկացել են ուսումնասիրել բժշկությունը և այդ նպատակով արտագրել են տվել բժշկարաններ (հիշենք Հեթում պատմիչին, որի մասին իրեն համար արտագրված մի բժշկարանում պահպանվել է հետևյալ հիշատակարանը. «Զստացող բժշկարանիս զմեծ սեաստիոս և թագաւորազն և բարեհամբաւ դայրն դպարոն Հեթում Տէր Կոռիկոսոյ ... յիշեսջիք ի Քրիստոս»)։

Հասարակության մեջ բժիշկների ունեցած դիրքն ու բարեկեցությունը նկատի ունի Հովհ. Երզնկացին, երբ իր մի այլ («Ի ԽԶ. Սաղմոսն Դաւթի, ի մեկնողաց բանից համարեալ») քարոզում գրում է. «Մի յուսայք յիշխանս...զի ոչ են միշտ իշխանք, և դիւրաթառամ է փառք և մեծութիւն նոցա իբրև զծաղիկ խոտոյ. և մի յայլ որդիս մարդկան, թէ արուեստագէտ է կամ բժիշկ և թէ այլ ինչ յերկրաւորացս յաջողեալ...»[1]

Այս հատվածը պարզում է, որ բժիշկները, իշխանների ու արհեստավորների նման, տնտեսական ու իրավական այնպիսի պայմաններում են գտնվելիս եղել, որ շարժել են հասարակ ժողովրդի նախանձը։

Մեզ մնում է պարզել ևս մի խնդիր.

Հերձումները Կիլիկիայում կատարվել են, արդյոք, սովորական տիպի բուժանոցներում, թե պետության կողմից հովանավորվող, թերևս պետական սեփականություն հանդիսացող հիվանդանոցներից մի քանիսը միաժամանակ եղել են բժշկական դպրոցներ, որոնցում և, ուսուցման նպատակով, հաճախակի կատարվել են հերձումներ։

Վերհիշենք, որ Ֆրիդրիխ Բ-ի 1238 թվի հրամանով դիահերձման իրավունք ստանում էին ոչ թե բոլոր բժիշկները, այլ միայն Սալեռնոյի Բժշկագիտական դպրոցը (այն էլ 5 տարին մեկ անգամ), ուր սովորում էին

[1] Ձեռ. № 2173 էջ 265 բ։

Օգտվելով առիթից, առաջ բերում ենք նույն քարոզից բժշկության սահմանման մասին Երզնկացու հետաքրքիր դատողությունները՝ «...բժշկական արուեստ նիւթ ունի զմարդկային մարմին, զի յաղագս մարդկան մարմնոյ եղանի. և հանճար զօրութեան արուեստի սորա է գիտել զխառնուածոցն առողջութիւն և նուազութիւն, և ի շարժմանէ երակացն, և ըստ ժամանակին և հասակին և բնութեան տեղոյն՝ դեղս կազմել յարմարական շարախառնութեամբ։ Իսկ կատարումն բժշկութեան է կամ զներկա առողջութիւն պահել. կամ զի բաց գնացեալն վերստին դարձուցանել» (էջ 261 ա)։

բազմաթիվ աշակերտներ, և որոնց ողջ ուսուցման ընթացքում անհրաժեշտ էր գեթ մեկ անգամ տեսնել մարդու հերձված մարմին։

Այս հարցին դրական պատասխան տալու միջոց չէինք ունենա, եթե այս անգամ էլ Հովհ. Երզնկացին իր քարոզներից մեկում կատարած չլիներ մի թանկարժեք համեմատություն։

1283 թվին Հեթում և Թորոս արքայորդիների ասպետական կարգի մեջ մտնելու հանդեսում արտասանած իր քարոզում, բազմապիսի բարոյախրատական ու մարդասիրական խրատներ տալով, Երզնկացին հորդորում է նորաօծ ասպետներին լավատեղյակ լինել երկրի կառավարման ու ժողովրդին սփոփելու, նրա պահանջները հոգալու գաղտնիքներին, և բերում է հետևյալ համեմատությունը.

«Զորօրինակ եթէ ոք անուանէ զինքն բժիշկ, կազմէ բժշկանոցս, ստանայ աշակերտս, ժողովէ և դեղս բազումս, և թէ ոչ գիտէ զարուեստ և զխառնուած դեղոցն՝ սուտ են ասացեալքն ամենայն։ Այսպէս և իշխան և թագաւոր բժիշկ է հասարակաց ժողովրդեան, ունի բժշկանոց՝ զարքունիսն, աշակերտս՝ զսպասաւորսն, հիւանդս զժողովուրդսն, և թէ ոչ գիտէ զթագաւորական և զիշխանական սահման և զգործ՝ ոչ է ճշմարիտ»[1]

Ի՞նչ իմաստով է հատվածում գործածված «բժշկանոց» տերմինը։

Այդ բառին հայկազյան լեզվի նոր բառգրքում տրված մեկնությունները անբավարար են թվում հատվածի իմաստին խորամուխ լինելու համար։ Ըստ բառգրքի հեղինակների՝ «բժշկանոց» և «բժշկարան» բառերը նույնանիշ են և համապատասխանում են հունական Ἰατρεῖον բառին։ Նրանք կարողացել են տարբերել այդ բառերի հետևյալ իմաստները մեր մատենագրության մեջ՝ (ա) տուն և կրպակ բժշկի. (բ) տեղի և առիթ բժշկության, (գ) գիրք կամ մատյան բժշկության արհեստի, (դ) դեղ և դարման բժշկության և այլն։ Մեր կարծիքով՝ Հովհ. Երզնկացին իր քարոզում այլ իմաստով է գործածել «բժշկանոց» տերմինը։ Հատվածի իմաստը պահանջում է տեսնել դրա տակ ինչ-որ հաստատություն, չենք աշակերտներով ու հիվանդներով, այլապես արքունիքի և «բժշկանոցի» միջև համեմատությունը անհիմն կլիներ։

Երզնկացին չի օգտագործել հաճախ գործածվող «հիվանդանոց» տերմինը, որովհետև այն նշանակում է հիվանդների բուժման վայր (հիվանդ-ան-ոց), այլ բժշկանոց, որը եթե համեմատենք նման ձևով ստեղծված վարդապետ-ան-ոց (վարդապետների ուսուցման վայր), դպր-ան-ոց (հնում դպիրների ուսուցման վայր) տերմինների հետ, ապա ակնհայտ կդառնա, որ այն նշանակել է և մեզ է բերվել Երզնկացու կողմից՝ «բժշկական դպրոց», ավելի ճիշտ՝ «կլինիկա» իմաստով։ Այս մեկնությունը հաստատվում է հատվածի բովանդակությամբ. վերհիշենք. այնտեղ ասված է «եթե որևէ մեկն իրեն կոչի բժիշկ, հիմնի բժշկանոց, ձեռք բերի աշակերտներ, հավաքի բազմաթիվ դեղեր...» և այլն, իսկ շարունակության մեջ՝ «Բժշկանոցը սը-

[1] Ձեռ. № 2178, էջ 93 բ։

քունիքն է (կամ նման է արքունիքի), աշակերտները սպասավորներն են, հիվանդները՝ ժողովուրդը և այլն։[1]

Կարծում ենք, որ Երզնկացու քարոզներում եղած վերոհիշյալ համեմատությունները լիակատար իրավունք են տալիս եզրակացնելու, որ Կիլիկիայում (թերևս նաև բուն Հայաստանի շրջաններում) գոյություն են ունեցել բժշկագիտական դպրոցներ, այդ դպրոցներում ուսուցումը զուգորդվել է կլինիկական պրակտիկայի հետ, և, որ ամենակարևորն է, կլինիկաներում բժշկապետները, գիտական և ուսուցողական նպատակներով, կատարել են պետության կողմից ժամվան դատապարտված հանցագործների հերձումներ (vivisectia)։

[1] Հայաստանում բժշկագիտական դպրոցների գոյության օգուտն է խոսում նաև Բարգուզիմեռ Բոլոնացու քարոզներից մեկում («Քարոզ օծման հիւանդաց», Ձեռ. № 2183, էջ 160 բ.) պահպանված հետևյալ հատվածը. «Հոգեոր բժիշկն նման է մարմնաւոր բժշկի, և մարմնաւոր բժիշկն այլ ազգ գեղ կու առ յորժամ ի գաստատունն է և զդիրքն կու կարգա. զի յայնժամ ծանր գեղ կու առ, զինչ ի գիրքն գրած է, և այլ ազգ գեղ կու առ յորժամ ի գաստատանէն ի դուրս կուգա և ի մէջ հիւանդաց կու շրջի. և զի հանաչէ զակարութիւն հիւանդացն վասն այն օգտրմած լինի և թերև գեղ առ. ապա այլ ազգ գեղ առ հիւանդին և ես, յորժամ ինքն հիւանդ լինի կացեալ և գաւն գեղ առեալ, և յայնժամ առաւել խղճի հիւանդին»։